

կ'առնէր էլ-աղասի հիւրերը՝ անոնք իրենց ձեռները լուալէ յետոյ կ'սկսէին ճաշել : Նախ Աշիրաթապետ ինքն էր որ թեւերը մինչև արմուռնկ ետ քաշելով ու կապելով՝ նշանը կուտար . անմիջապէս կը բերէին ողջ ողջ խորովուած հինգ վեց գառներ՝ ու կը շարէին փիլաւէ լեռան լանջերու վրայ , իրաւունքը Աշիրաթապետինն էր նախ՝ վերցնել այդ մեծ մեծ գառներէն մէկը ու երկու ոտներէն բռնելով միանգամէն՝ ուժով մը պատառելով երկուքի բաժնել , ու յետոյ քանի մը կտորներու վերածել , ապա միւսները իրենց հերթին :

Անոնք ձեռները խրած փիլաւէ սարը ու մատները լարած՝ ալիերը բանալով աչքքան շատ պիտի ճանկէին ու ճրմէին իրենց բերանին տանելու համար , որ իւզը թորելով իջնէր բազուկն ի վեր ու արմուռնկէն վար կաթէր , ադոր հետ ի միասին զանազան թասերով կը խմէին մածնէ պատրաստած հեղուկ թանը ու կ'ուտէին գառան խորոված կտորները՝ որը գառան հասակի երկարութեամբ ձեղքուած կտոր մը լինելով՝ երկար երկար ձեռքերնին բռնած ատամներով կը յօշոտէին : Անոնք վեր կենալէ յետոյ՝ սեղան կը նստէին անոնցմէ ցածր ատտիճանի քիւրդերը , ու այսպէս՝ մինչև յետին ծառաները . նթէ սեղանէն բան աւելնար կը տարուէր ծառաներու տունը :

Ճաշէն յետոյ կարգ կուգար Աշիրաթապետի դատաստանական գործերուն , նա անցնելով վրանի ետեւ՝ կանաչ մարգի վրայ կը նստէր ծալապատիկ , ամբաստանողն ու ամբաստանեալը , վկաները , մատինշան ընդունելով կուգային առանձին առանձին , ու բերանը ցեղապետի ականջին դրած ու ծունկ չոքած կը փափոսային , այդ ձևը ինձ կը յիշեցնէր Քրիստոնեայ քահանաներու խոստովանահայրն ու խոստովանորդին . ոչ ոք չէր իմանար թէ Աշիրաթապետական խոստովանահայրութիւնը թողութիւն կուտար մեղապարտ խոստովանորդուն թէ կը պատժէր . Աշիրաթապետը լուռ ու մունջ վեր կը կենար , պատիժն ու վարձատրութիւնը , կամ արդարադատութեան գործադրութիւնը թողնելով սպազային յայտնելու յանցաւորին կամ իրաւատէր կողմին՝ գործնականին մէջ :